

ԳԷՈՐԳ ՄԱԴՈՅԵԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու

ՍԻՐԱՆՈՅՇ ՄԱԴՈՅԵԱՆ

ԱՍՏՈՒՍԱՇՆՉԻ ԱՆՊԵՐԷՆ ՍԵԿՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ «ՀԱՆՈՒՐՅ ՀԻՒՍԻՍԱԿԱՆԱՅ ՎԵՂԱԳՈՅՆ»-Ի ՄԱՍԻՆ

Նայ քերթութեան Հօր Ողբի տողերից («Պատմութիւն Հայոց», գ. Գ., գլ. ԿԸ.) մենք մեզ ճանաչում ենք իբրեւ հիւսիսային ազգ, որովհետեւ ինչպէս Մովսէս Խորենացին է բնորոշել՝ մենք «համուրց հիւսիսականաց վեհագոյն» ենք: Արդէն նրանից վերցնելով՝ ի թիւս այլ եւ այլոց «Բազմավէպը» դրոշմում է. «Վիպագիրն «հանուրց հիւսիսականաց վեհագոյն» ճանաչէ զաշխարհ իւր»¹: Սակայն այսօրուայ հայի համար բնական հարց պիտի առաջանայ. ինչո՞ւ ենք մեզ հիւսիսային համարում, եւ արդե՞օք միայն մենք ենք մեզ ճանաչում որպէս այդպիսին: Իր առաջին գրքում՝ Հայկի պատմութիւնը շարադրելիս, Խորենացին նշել է, որ մեր Նահապետը Բաբելոնից հեռացաւ դէպի հիւսիս՝ «չու արարեալ գնայ յերկիրն Արարադայ, որ է ի կողմանս հիւսիսոյ» (գ. Ա., գլ. Ժ.): Պատմահօր այս տողը լիովին բացատրում է, թէ ինչու պիտի կոչուէինք «հիւսիսական»: Հատուածը զուգահեռաբար տեղեկութիւն է տրամադրում, թէ հիւսիսականութեան աւանդութիւնն ինչ պահի է ծագում (Բաբելոնից հեռանալիս), հետեւաբար նաեւ ի՞նչ տեղանքի կամ որտեղի՞ ժողովրդի պատկերացմամբ պէտք է Հայկի բնակութեան վայրը հիւսիս համարուէր: Նոյն աւանդութեամբ Հայկի հետ բանակցելու համար Բելը հիւսիս պիտի ուղարկէր իր որդիներից մէկին՝ «ի հաստատել Տիտանեանն Բելայ զթագաւորութիւն իւր առ ամենեսեան՝ առաքէ ի կողմն հիւսիսոյ զմի ոմն յորդոց իւրոց առ Հայկ» (գ. Ա., գլ. ԺԱ.): Թերեւս հէնց միայն այսօր քանով կարող ենք եզրակացնել, որ առնուազն այն պահին, երբ Հայկ Նահապետը հեռացաւ Տիտանեանից եւ իր սերունդների հետ հաստատուեց Արարադի երկրում, Բաբելոնում մնացողների պատկերացմամբ

¹ Տե՛ս «Բազմավէպ», 1844, էջ 368:

նա դարձաւ հիւսիսաբնակ: Սակայն առաւել համոզուելու համար փորձենք հիւսիսականների մասին հնագոյն աւանդութեան բեկորների հետ համադրել Քերթողահօր վկայութիւնը:

Գիտենք, որ աշտարակաշինութեան երկրում եղած պատումներն արձագանք են թողել տարբեր ազգերի մշակոյթներում: Ի թիւս այլոց՝ հնագոյնից դրուագներ են պահպանուել նաեւ Աստուածաշունչ Մատեանում: Հիւսիսականների կապակցութեամբ հետաքրքրական է, օրինակ, Շսայիի մարգարէութեան հետեւեալ հատուածը, ուր յիշատակուած են հիւսիսի բարձր լեռները. «Դու ասէիր ի մտի քում. «Ելից յերկինս, ի վերոյ քան զաստեղս երկնից արկից զաթոռ իմ. նստայց ի լերինն բարձու, ի վերայ լեռանց բարձանց հիւստոյ: Ելից ի վեր քան զամպս, եղէց նմանաւ բարձրելոյն» (Շսայ. ԺԴ. 13—14): Նախ նկատենք, որ քաղուածն այլընթերցուածներ ունի. մէկով ի մտի քում-ն է փոխարինելի ի սրտի քում ձեւով², իսկ միւսը լերինն բարձու կապակցութեան որոշիչին է վերաբերում՝ լերինն ժողովոյ³: Եւ եթէ այդ փոփոխութիւններն ընդունուենք, մեր բնագիրը կմօտենայ օտար տարբերակներին, որ, ինչպէս երեւում է ստորեւ բերուող աղիւսակից, նոյնպէս միասնական չեն:

Սինոդական թրգմ.	Ջէմսեան թրգմ.	Ամերիկեան նոր թրգմ.
¹³ А говорил в сердце своем: «взойду на небо, выше звезд Божиих вознесу престол мой и сяду на горе в сонме богов, на краю севера; ¹⁴ взойду на высоты облачные, буду подобен Всевышнему».	¹³ For thou hast said in thine heart, I will ascend into heaven, I will exalt my throne above the stars of God: I will sit also upon the mount of the congregation, in the sides of the north: ¹⁴ I will ascend above the heights of the clouds; I will be like the most High.	¹³ “But you said in your heart, ‘I will ascend to heaven; I will raise my throne above the stars of God, And I will sit on the mount of assembly In the recesses of the north. ¹⁴ ‘I will ascend above the heights of the clouds; I will make myself like the Most High.’

Նկատելի է՝ ռուսական թարգմանութեան մէջ «աստուածներ» բառն է յաւելուած, որ անկախ որեւէ թարգմանութեան մէջ առկայ լինելուց, ցանկացած դէպքում հասկացում ու պատկերացում է շարակարգից:

² ԱՄ, Վենետիկ, 1805:

³ ԱՄ, Կոստանդնուպոլիս, 1895:

Այստեղ, ամենայն հաւանականութեամբ, գործ ունենք մի պատառիկի հետ, ուր հրէաները պահպանել են բաբելական ականդութեան մէջ փայփայած՝ հիւսիսին առընչուող մեծագոյն երազանքը՝ արժանանալ հիւսիսի բարձր լեռանը բազմելու պատուին, լինել հիւսիսային այն տարածքում, ուր բաբելացիների պատկերացմամբ խմբուած են աստուածները: 1878-ին Հարթֆորդում տպուած մեկնութեան երեք հեղինակները հատուածի կապակցութեամբ ընդգծում են, որ Բաբելոնի արքայի պատկերացմանն ենք այստեղ ականատես լինում, ոչ թէ հրէաների երեւակայական պատկերի: Նրանք նաեւ թէական կարծիք են յայտնում, որ հիւսիսային լեռը հաւանաբար Հայքում է, եւ այնտեղ է աստուածների հաւաքատեղին. «However, the parallelism supports the notion that the Babylonian king expresses himself according to his own, and not Jewish opinions (so in Isa 10:10) thus “mount of the congregation” will mean the northern mountain (perhaps in Armenia) fabled by the Babylonians to be the common meeting-place of their gods»⁴: Այս մեկնութիւնից դեռեւս չորս տասնամեակ առաջ (1834 թ.)՝ Աստուածաշնչի իր տասնչորսհատորանոց մեկնութեամբ յայտնի Ալբերթ Բարնէսը կարծիք է յայտնել, որ մարգարէի յիշատակած հիւսիսայինով՝ Հայաստանեան լեռները կարող էին պատկերացուել իբրեւ աստուածների բնակատեղի. «Thus in Babylon, some of the mountains north in Armenia may have been supposed to be the special dwelling-place of the gods»⁵: Անշուշտ պէտք է յիշենք՝ Աստուածաշնչի մեկնիչները երբեք միասնական չեն եղել, եւ չի կարելի ականակալել, թէ բոլորը համաձայնած կլինեն, որ վաղ-վաղնշական պատկերացմամբ աստուածների հաւաքատեղին Հայոց հիւսիսային աշխարհի լեռներից մէկն է: Թերեւս այս հարցում կարելոր հանգամանք է, թէ մեկնիչը որքանով է գիտակցում կամ ընդունում՝ ա) «Իմ գահը կղնեմ Հիւսիսի բարձր լեռան վրայ՝ աստուածների ժողովում» արտայայտութեան բաբելական ծագումը, բ) բաբելացիները գիտէին կամ պատկերացնում էին, թէ որտեղ են խմբուած աստուածները կամ գերբնական ուժերը, եւ դրա արձագանքը յաճախ նկատելի է Սուրբ Գրքում: Քէմբրիջեան բացատրութեան մէջ նշուած է, որ Աստուած յայտնուում է ամպի եւ մրրիկի ուղեկցութեամբ, լոյսով շրջապատուած: Եւ բերում են օրինակներ, ուր Աստուածութիւնը յատկաբար գալիս է հիւսիսից. «Եւ տեսի՝ եւ ահա հողմ վերացեալ գայր ի հիւստոյ, եւ ամպ մեծ ի կողման նորա. եւ լոյս շուրջ զնովաւ, եւ հուր փայլատակէր ի նմանէ. եւ ի մէջ նորա իբրեւ զտեսիլ բազմագունի

⁴ *See* REV. R. JAMIESON, REV. A. R. FAUSSET, REV. D. BROWN, *A Commentary, Critical and Explanatory, on the Old and New Testaments*, vol. I, Hartford, 1878, էջ 446:

⁵ *See* <https://sacred-texts.com/bib/cmt/barnes/isa014.htm>:

ականց, եւ ճառագայթք ի նմա» (Եզեկ. Ա)⁶: Աստուածութեան (թիւնների)՝ հիւսիսում հաստատուած լինելու մասին վկայութիւն գտնում ենք նաեւ Եւսեբիոս Կեսարացու մատեանում, երբ հեղինակը վերաշարադրում է մեծ ջրհեղեղի եւ դրանից փրկուած Նահապետի պատմութիւնն ըստ Բերոսոս Քաղդէացու: «Եւ ըստ յաջորդականութեան գրելով՝ պատմութիւնը նկարագրում է այսպէս. «Կրովն [Կրոնոս, Քրոնոս],— ասում է [Բերոսոսը],— որին Արամազդի հայր են անուանում, իսկ ուրիշները՝ Ժամանակ, քնի մէջ յայտնեց նրան [Քսիսութրոս-Նոյին], որ տասնհինգերորդ օրը դէսիոս ամսի, որ մարացն է, մարդկութիւնը կկործանուի ջրհեղեղից: Նաեւ հրամայում է բոլոր առաջին, միջին եւ վերջին մատեանները փորել եւ դնել սիպարացիների Արեգ քաղաքում: [Հրամայում է] նաեւ նաւ կառուցել եւ մէջը մտնել ազգականների եւ կարեւոր բարեկամների հետ մէկտեղ: Ներսում ամբարել պարէն եւ ըմպելիք: Ներս տանել նաեւ գազաններին, թռչուններին եւ շորքոտանիներին եւ ողջ կազմով պատրաստ լինել նաւարկելու: [Քսիսութրոսը] հարցրեց, թէ դէպի ո՞ւր պիտի նաւարկի, եւ [Կրովն] պատասխան տուեց, թէ՝ աստուածների մօտ՝ [Արարատի երկիրը՝ Հայոց աշխարհ]»⁷: Բնագրում չի ճշգրտւում, որ Քսիսութրոս-Նոյը պէտք է նաւի «Արարատի երկիր՝ Հայոց աշխարհ», այլ միայն «առ դիսն» նշումն է, սակայն ուղիղ փակագծով մեր յաւելումը կատարելու իրաւունք տալիս է հետագայ շարադրանքը, ուր նաւի հանգրուանի մասին ասուած է՝ «...տեղին՝ յորում վայրի ելեալ կային, Հայոց աշխարհն է»⁸: Դէպի Հայք նաւելու Քսիսութրոսի նպատակադրուածութիւնն առաւել որոշակի է Եւսեբիոսի հետեւեալ քաղուածում. «...առագաստ բարձրացնելով՝ կամենում էին նաւել դէպի Հայք...»⁹: Փաստօրէն հելլենական շրջանի բաբելացի հեղինակ, Բէլ-Մարդուկի տաճարի գլխաւոր քուրմ Բերոսոս կամ Բերոս Քաղդէացու (Ք. ա. 350/340 — 280/270 թթ.) տողերը, որ Աբիւղէնոսի (Ք. ա. ≈ 200 թ.) Ալեքսանդր Բազմավէպի (Ք. ա. 100 — Ք. ա. 40 թթ.) շնորհիւ հասել են Եւսեբիոսին, ցոյց են տալիս, որ իրապէս բաբելական աւանդութեամբ աստուածների հաւաքատեղին պատկերացուել է Հայոց լեռներում:

⁶ Տե՛ս <https://biblehub.com/commentaries/ezekiel/1-4.htm>: Մեկնութիւնները, որոնք չենք ներկայացնում առանձին յոդւմով, կարելի է գտնել ներկայ հասցէում՝ համապատասխանաբար նշելով Գիրքն ու տողը:

⁷ Տե՛ս «Յետջրհեղեղեան օրերն Արարատի երկրում», Երեւան, 2016, էջ 41–42. հմմտ. «Եւսեբիոսի Պամփիլեայ Կեսարացոյ Ժամանակականք», մասն Ա., Ժամանակագրութիւն պատմական, Վենետիկ, 1818, էջ 31–33:

⁸ «Եւսեբիոսի...», էջ 36. հմմտ. «Յետջրհեղեղեան...», էջ 44:

⁹ «Եւսեբիոսի...», էջ 49. հմմտ. «Յետջրհեղեղեան...», էջ 37:

Վերելում յիշելով Բարնէսի մեկնութիւնը՝ անկարելի է չանդրադառնալ եւրոպական լեզուներում յայտնուած դրախտ բառի նրա ստուգաբանութեանը: Նա համոզուած է, որ paradise (յուն. παράδεισον) բառը՝ յունարէնը, լատիներէնը եւ այլ արեւմտեան լեզուներ փոխառել են Արեւելքից: Մեկնիչը մանրամասնում է, որ սանսկրիտում պարադէշա-ն հերկուած-մշակուած հողն է, հայերէնում այն պարտէզ¹⁰ է հնչում, իսկ պարսկերէնում նշանակում է պարտէզ-գթօսայգի. «It is a word which had its origin in the language of Eastern Asia, and which has been adopted in the Greek, the Roman, and other western languages. In Sanscrit, the word *paradesha* means a land elevated and cultivated; in Armenian, *pardes* denotes a garden around the house planted with trees, shrubs, grass, for use and ornament. In Persia, the word denotes the *pleasure-gardens and parks* with wild animals around the country residences of the monarchs and princes»¹¹: Իսկ մեր յիշած միւս մեկնութեան հեղինակներն արդէն բառն ստուգաբանում են հիմնուելով սանսկրիտեան, հայերէն եւ արաբերէն¹² արմատների վրայ. «Sanskrit, “a place enclosed with a wall”; Armenian and Arabic, “a pleasure ground with flowers and shrubs near the king’s house, or castle»¹³: Պարտէզ բառի ստուգաբանութիւնը յիշելիս երեք կարելոր հանգամանք է պէտք ի մտի առնել՝ ա) հետազօտողները բառը չեն նշում իբրեւ հնդեւրոպական արմատ, այլ յատկապէս հին հնդ., հպարս., արաբ. կամ հայերէնից փոխառեալ: Իսկ փոխառեալութեան մասին խօսելիս պէտք է ուշադրութիւն սեւեռենք նաեւ այն պարագային, որ՝ բ) յոյները, լատինները եւ բոլոր միւսները ոչ թէ պարզապէս բառաձեւ են վերցրել, այլ գաղափար-նախագիտելիք աստուածատունկ այգու մասին: Այսինքն տուեալ պատումը հնդ., պարս. կամ հայկական ծագում ունի: Եւ վերջապէս՝ գ) պատումի ծագման հայրենիքը որոշակիանում է ոչ միայն այգուն տրուած անուան լեզուական հայրենիքով, այլ նաեւ աշխարհագրութեամբ՝ թէ որտեղ, ինչպիսի երկրում է այն պատկերացուել: Յոյժ տեղին է յիշելը մէկ այլ ուշագրաւ ստուգաբանութիւն էլիքութեան մեկնութիւնից, ըստ որի

¹⁰ Հրաչեայ Աճառեանը նախ բերում է հին պահլաւերէն ձեւը, իսկ յետոյ նաեւ Schröder-ի՝ պարս սէզ ստուգաբանութիւնը՝ յաւելելով, որ հեղինակը մեզնից փոխառեալ է դնում միւսները. տես «Հայերէն արմատական բառարան», հտ 4:

¹¹ Տես «Barnes New Testament Notes», Michigan, 1949, էջ 3148:

¹² Արաբերէնի կապակցութեամբ տես Վ. ՈՒՐԻՇԵԱՆ, Մեր արմատները նոր լոյսի տակ, Գրանդա Հիլլս, 1995, էջ 133:

¹³ Տես REV. R. JAMIESON..., A Commentary..., էջ 404:

Արարատ անունը սանսկրիտում նշանակում է սուրբ երկիր. «The name Ararat is Sanscrit, and means “the holy land”»¹⁴:

Հիւսիս բառի՝ Աստուածաշնչում հանդիպող մէկ այլ կիրառութիւն Իսահակ Նիւտոնին է առիթ տուել յիշելու Հայաստանը. «Անդ ամենայն իշխանք հիւստոյ, եւ ամենեքեան նոքա զաւրավարք Ասորեստանոյն, իջեալք վիրաւորք հանդերձ ահիւն զաւրութեամբ իւրեանց, ամաթալից ննջեցին անթլփատք ընդ վիրաւորս սուսերաց, եւ տարան զտանջանս իւրեանց ընդ իջեալսն ի խորխորատ» (Եզեկ. ԼԲ. 30): Այս հաստատածի կապակցութեամբ Իսահակ Նիւտոնը գրում է, որ իշխանք հիւստոյ ասեւրով՝ ինքը հասկանում է Յուդայի հիւսիսում գտնուողներին՝ յատկապէս Հայաստանի եւ Կապադոկիայի տիրակալներին. «Here by the Princes of the North I understand those on the north of Judæa, and chiefly the Princes of Armenia and Cappadocia, who fell in the wars which Cyaxeres made in reducing those countries after the taking of Nineveh»¹⁵:

Նիւտոնը Հայաստանը յիշում է նաեւ Տովբիթ Ա. գլխին անդրադառնալիս՝ Սենեքերիմի որդիներին՝ Հայոց լեռները հեռանալու կապակցութեամբ. «Upon this defeat Sennacherib returned in haste to Nineveh, and his Kingdom became troubled, so that Tobit could not go into Media, the Medes I think at this time revolting: and he was soon after slain by two of his sons who fled into Armenia, and his son Asserhadon succeeded him»¹⁶:

Երեմիայի մարգարէութեան Ա. գլխում դարձեալ յիշուած է հիւսիսը (15-րդի ահաւասիկ ես միախուռն կոչեցից զամենայն թագաւորութիւնս թագաւորութեանց՝ ի հիւսիսոյ երկրէ), որ Բէնսոնեան մեկնութեան մէջ մեղացիք, հայք եւ քաղղէացիք են:

Վկայութիւն կայ նաեւ Եզեկիէլի մարգարէութեան ԼԸ. գլխում, բայց արդէն ոչ թէ վերացական, որ կարող է ընկալուել իբրեւ մեղացւոց կամ քաղղէացւոց յիշատակութիւն, այլ յատկապէս շեշտուած է՝ Տունն Թորգոմայ, եւ հետազօտողների մեծագոյն մասի պատկերացմամբ Հայոց մասին է ակնարկը. «Գոմեր՝ եւ ամենեքին որ շուրջ են զնովաւ. եւ տունն Թորգոմայ ի ծագացն հիւստոյ, եւ ամենեքին որ շուրջ զնովաւ, եւ ազգք բազումք ընդ քեզ»: Ընդհանրապէս Եզեկիէլի ԼԸ. եւ ԼԹ. գլուխները

¹⁴ Տէս «Ellicott's Commentary on the Whole Bible», Edited by Charles J. Ellicott, vol. V, Cassell, 1897, էջ 170:

¹⁵ Տէս Sir ISAAC NEWTON, The Chronology of Ancient Kingdoms, London, 1728, էջ 318:

¹⁶ Անդ, էջ 282: Ինչպէս գիտենք, այդ պատմութիւնը հանդիպում է նաեւ այլ Գրքերում (Դ. Թագաւորութեանց (ԺԹ.) եւ Եսայու (ԼԷ.):

վախճանաբանական պատերազմի առաջին յիշատակութիւնն են, ուր հիւսիսականները հանդէս են գալիս իբրեւ Աստծու ժողովրդի ախոյեաններ, որ պէտք է կործանուեն: Այս տեսանկիւնից, բնականաբար, հիւսիսականների հետ նոյնացումը ցանկալի չի կարող լինել: Բայց, ինչպէս առիթ ունեցել ենք նկատելու, Աստուածաշնչի մեկնութիւններում միասնականութիւն չկայ, եւ իշխողը բազմակարծութիւնն է: Եւ ինչպէս նշում է Յովհան Ոսկեբերանը, Գոգի եւ Մագոգի մասին մարգարէութիւնը «ոմանք այլաբանօրէն են ընկալում»¹⁷: Իսկ Ալեքսանդր աւագերէց Մէնը կարծում է, որ Եզեկիէլը «Աստծու ժողովրդի ախոյեանների անունները փոխառել է հիւսիսի ռազմատենչ թագաւորների եւ ցեղերի մասին աւանդութիւններից (Գովգը մեղացւոց արքայ Գիգէսն է, Ռովսմեսովքը՝ Ուրարտուի արքայ Ռուսան, Մագովգը եւ Թուբալը՝ Հիւսիսային Միջագետքի եւ Կովկասի ժողովուրդներ)»¹⁸: Իբրեւ փոխառութեան աղբիւր, այսինքն Եզեկիէլին նախորդած աւանդութիւն, թերեւս կարող ենք ընդունել նաեւ Եսայու մարգարէութիւնը, ուր բացառապէս դրական կողմից են հանդէս գալիս «Այրարատեան թագաւորութիւնները եւ Ասքանագեան գունդը» (պարզապէս Եզեկիէլի տողերում անունները փոխարինուել են «Տունն Թորգոմայ» ձեւով), եւ նրանց միջոցով է, որ «եկն եհաս ի վերայ Բաբելոնի խորհուրդ Տեառն» (ԾԱ. 27)¹⁹: Եզեկիէլեան հատուածի կապակցութեամբ էլիքոթեան խմբագրութեան մէջ նշուած է, որ Գոմերը նոյնացւում է կիմմերների հետ (Գոմերի՝ մեզ հարազատ կամ օտար լինելու կապակցութեամբ պարզապէս յիշենք Մովսէս Խորենացու համապատասխան տողը, ուր նա խոստովանում է՝ «հանդէս է մեր՝ ոչ զպատմութեանն ողջաբանութիւն գրել, այլ ջանալ ցուցանել զառաջինս մեր եւ զբուն հին նախնիս: Արդ ի նոյն մատենէ սկսեալ ասացից. Յապետոթէ, Մերոդ, Սիրաթ, Թակլադ. որ է Յաբեթ, Գոմեր, Թիրաս, Թորգոմ» (գ. Ա., գլ. Թ.), իսկ Թորգոմի Տուն ասելով՝ հայերին է պէտք հասկանալ. «Gomer... Togarmah.—Again the address turns to the extreme north. Gomer, like Magog, a people descended from Japheth (Genesis 10:2; 1 Chronicles 1:5), is identified with the Cimmerians; and for the house of Togarmah, the Armenians»:

Այնուհետեւ անգլերէն մեկնութեան մէջ յղում է արւում Եզեկիէլի մարգարէութեան Իէ. գլխի 14-րդ համարին, ուր բացատրուած է, որ Թորգոմը հայերին տրուող անուններից է: Թորգոմեանները Յաբեթեան շառաւիղ

¹⁷ Տէս Ա. МЕНЬ, Исагогика, М., 2000, էջ 404:

¹⁸ Տէս անդ:

¹⁹ Այս հատուածի կապակցութեամբ տէս «Նետակալ բառի ստուգաբանութեան փորձ Հայկի առասպելի լոյսի ներքոյ», ԲեՀ, 2004, հ. 2:

են՝ հին աշխարհում յայտնի՝ ձիաբուծութեան ասպարէզի իրենց ձեռքերումնեքով՝ «Togarmah.—A name for the Armenians, a race of Japhetic descent (Genesis 10:3). They dealt from most ancient times in horses and asses»: Այստեղ պէտք է նշել, որ Աստուածաշնչի ոչ բոլոր մեկնիչներն են ընդունում Թորգոմի եւ Հայոց կապը: Այս հանգամանքը լաւագոյնս ձեւակերպուած է «Pulpit Commentary» վերտառութեամբ յայտնի բազմահատորեակում: Ի մասնաւորի մատնանշուած է, որ Հիերոնիմոսը Թորգոմեան Տունը նոյնացնում է փոխկրիացիների հետ, ուրիշները կապադովկացիների, սակայն առաւել լայն ընդունելութեան է արժանացել Հայոց հետ առնչակցելու տեսակէտը, որի օգտին պատշաճ վկայութիւններ են նշուած Քսենոփոնից, Ստրաբոնից եւ Հերոդոտոսից. «Togarmah.—The name appears in Ezekiel 38:6 as an ally of Gog, in Genesis 10:3 as a son of Gomer. Jerome identifies it with Phrygia, others with Cappadocia, but there is a wider consensus for Armenia, which was famous for its horses and mules (Xenophon, 'Anab.,' 5. 34; Strabo, 11:14. 9; Herod., 1:194)»: Եզեկիէլի մարգարէութեան մէջ հանդիպող «Տունն Թորգոմայ ի ծագացն հիւսւոյ» արտայայտութիւնը պարտաւորեցնում է նաեւ յիշել, որ ԼԸ. եւ ԼԹ. գլուխներում Գոմերից ու Թորգոմից բացի հանդիպում են նաեւ այլ անուններ՝ «Որդի մարդոյ՝ հաստատեա՛ղ զերեսս քո ի վերայ Գովգայ, եւ երկրին Մագովգայ, իշխանին Ռովսմեսովքայ եւ Թոբեւայ»²⁰: Անգլիացի անհամակերպ (nonconformist) աստուածաբան եւ մեկնիչ Մէթիու Փօլը (1624—1679 թթ.) իր վարկածով եւս մէկ անուն է աւելացնում եղածներին, հնարաւոր նկատելով, որ «իշխանին Ռովսմեսովքայ» կապակցութեան «իշխան» թարգմանուող բաղադրիչը կարող է Արաքս գետին տրուող յատուկ անունը լինել. «Prince; what we render prince may well be the proper name of Araxes in Arabic, the principal river of Armenia, and so that the first country mentioned under the command of Gog, or the Scythians of Mount Taurus, which were called Rhos»:

Գոգի եւ Մագոգի մասին մեր շարադրանքին օգտակար է ռաբբի Փեթահիայի ճամփորդութեան գրառումը²¹, ըստ որի Ռատիսբոնցի հրէայ հոգեւորականը ԺԲ. դարավերջին «Բաղդադում տեսաւ Meshech-ի արքաների հիւպատոսներին, որովհետեւ Մագոգը մօտ տասն օրուայ հեռաւորութեան վրայ է այնտեղից: Երկրին այնքան հեռու է, որքան Մթին սարերը»²²: Անգլերէն թարգմանութեան մէջ հատուածը ծանօթագրուել է.

²⁰ Անունները հմմտ. Մնաց. Ա. 5—6:

²¹ Մանրամասն տե՛ս «Միջնադարյան մի ուղեգրական անգրադարձ Հայաստանին», «Էջմիածին», 2011, ԺԲ., էջ 101—107:

²² Տե՛ս անդ, էջ 104:

բացատրում է, որ Գոգի ու Մագոգի մասին խօսելիս Կարդինալ Պլասիդո Զուռլան (1769–1834 թթ.) նշում է, թէ Արեւելքի միտումն էր՝ մեկուսացած ժողովուրդներին լեռներին տեղաւորելը եւ նրանց նկարագրելը իբրեւ պատնէշուած, յաճախ Կասպիականի հարեւանութեամբ: Ծանօթագրողն անդրադառնում է նաեւ Մթին սարերին, ընդգծում, որ դրանք ակնառու դեր են խաղում ռաբբիների առասպելական աշխարհագրութեան մէջ. դրանց եւ Սամբատիոն գետի (Շամբատիոն, հմմտ. Շամբիան գետ Խոնաւ՝ նոյնն է՝ Մթին լեռներում²³) մերձակայքում էին հրէայ հոգեւոր հայրերը տեղաւորում տասն ցեղերին: ՌԱՇԻն (RAbbi SHlomo Itzhaki—ԺԱ. դարի այս հեղինակն անուան յապաւեալ ձեւով է յայտնի), իր՝ Ամովսի մեկնութեան մէջ (Դ. 3) ha-har-mō-w-nāh ընդ Հարմոն-ը (հայրէն թարգմանութեան մէջ՝ անկանիցիփ ի լեռնն Ռեմանայ) մեկնում է իբրեւ «Մթին սարեր», մինչդեռ Սողոմոն Եհուդա Լէյբ Ռապպոպորտը (1786–1867 թթ.) նոյնացնում է Հայաստանի հետ: Թալմուդը (Kiddushin, 72a) հաւաստում է, որ նոյն Հայաստան գերի տարուեցին տասն ցեղերից շատերը: [Թալմուդը] հէնց այդ վայրում է տեղաւորում նաեւ Մեսովքը եւ Մոշաւնին²⁴: Սրան յաւելելով, որ դեռեւս Բ. դարում է Սիմաքոս Թարգմանիչը Ամովսեան Հարմոնը Հայաստան հասկացել²⁵, նկատենք, որ թուացեալ օտար՝ Հարմոն-Հարմոն-Հարման անունը, գոնէ արմատական տեսանկիւնից, ամենեւին խորթ չէ մեզ. բաւական է յիշել Հայկ Նահապետի կրտսեր որդի կամ Գեղամ Նահապետի յաջորդ Հարմաներին, կամ Հայկի թոռ Կադմոսի կին Հարմոնիային, որի անունը Հայաստանի հետ է նոյնանում²⁶: Խորթ չէ նաեւ Ռեման (Ռեմանա) ձեւը, որ հարազատութիւն է դրսեւորում Հայոց (Վերին) Միջագետքի լեռնային շրջաններում եղած երկրին՝ Ռեմենէ ու ժողովրդին՝ Ռեմենէն տրուած անուանը²⁷: «Մ. Բրոսէն գրել է. «Մ. թ. ա. XVII դարում՝ XVIII հարստութեան ժամանակաշրջանում, եգիպտական հիէրօգլիֆ (մեհենագրոշմ) արձանագրութիւններում Միջագետքի հիւսիսում յիշատակուող երկիրը կոչւում էր Ռեմենէ (Remene), իսկ ազգը, որն ապրում է այնտեղ՝ Ռեմենէն (Remenen)»: Ըստ Մ. Բրոսէի՝ այն պէտք է Արմէնիայի եւ արմէնների եգիպտական անուանաձեւը լինէր (nom égyptien de l'Arménie et

²³ Տէս «Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան», կազմ. Թ. Յակոբեան եւ ուրիշներ, հտ. 3, էջ 813 եւ հտ. 4, էջ 67:

²⁴ Ն. տ.:

²⁵ Տէս <http://bible.optina.ru/old:am:04:03>:

²⁶ Այս մասին մանրամասն տես «Կադմոս, Հարմոնիա եւ Հայաստան», «Էջմիածին», 2018, Դ., էջ 46–60:

²⁷ Տէս «Հայաստանի եւ յարակից...», հտ. 4:

des Arméniens)»²⁸: Ինչպէս նկատուած է Քէմբրիջեան ուսումնական Աստուածաշնչում, դիտարկուող կապակցութիւնը մշտապէս դժուար է ընկալուել եւ ստուգաբանուել: Հներից ոմանք «Հարմոնահ» ասելով Հայաստանի ականարկ են նկատել, ուստի Թարգումը «Հարմինի լեռներ» է փոխադրել, Փէշիթթան (Peshitta Etheridge Translation, 1849) «Հայաստանի լեռ»․ «Some of the ancients saw in ‘Harmonah’ an allusion to Armenia: thus the Targ. renders, ‘And they shall carry you into exile beyond the mountains of Harmini’; Pesh. ‘And they shall be cast to the mountain of Armenia’»:

Քննարկուած նիւթն ի մի բերելով՝ դիտելի է, որ Սուրբ Գրոց հիւսիսը միշտ չէ, որ նոյնանում է Հայոց հետ. աւելին՝ միշտ չէ, որ հիւսիսն ընկալուում է իր բուն նշանակութեամբ: Ուշագրաւ է «Բառարան Սուրբ Գրոցի» համապատասխան յօդուածը՝ «Հիւսիս: Տէս Արեւելք», իսկ Արեւելքը բացատրուած է՝ «Բաց ի հասարակ նշանակութենէ արեւելք բառին հրեայք կգործածէին յաճախ այն բառը ցուցնելու համար ընդարձակ երկիր մը Պաղեստինու հիւսիսային արեւելեան եւ հարաւային արեւելեան, նաեւ արեւելեան դին, զորօրինակ Ասորիք, Արաբիա, նաեւ Բաբելոն, Ասորեստան, Հայաստան, այլովքն հանդերձ, նոյնպէս բոլոր երկիրը Կասպից ծովէն մինչեւ Արաբիոյ ծոցը»²⁹: Հետեւաբար հիւսիսականներն Աստուածաշնչում կարող են յիշուած լինել նաեւ որպէս արեւելեաններ: Մեր երկիրն արեւելքում տեղաւորելու ամենայայտնի օրինակը, Թերեւս, Ծննդոցի Բ. 8-ն է. «Եւ տնկեաց Աստուած զգրախտն յԵփեմ ընդ արեւելս»: Շատ աստուածաշնչագէտներ համոզուած են, որ այգին Հայոց աշխարհում է եղել: Անշուշտ կան նաեւ կասկածողներ կամ չկողմնորոշուածներ: Օրինակ՝ Զօն Գիլլը (1697–1771 թթ.) առաւել հաւանական է կարծում, որ այգին լինէր Տիգրիսի եւ Եփրատի միացման վայրում, քան նրանց ակունքի մօտ՝ Երից եկեղեաց (կամ էջմիածնի) յարակից հարթավայրում. «...it [the garden] was by the rivers Tigris and Euphrates, when they were become one stream... and it seems to be much better to place it here than in Armenia, where the fountain of these rivers is said to be: so Tournefort thinks it lay in the country, or plain of the Three churches (or Ejmiadzin), in Armenia»: Իսկ Ադամ Քլարքը (1762–1832 թթ.) համամիտ է նիգերլանդացի արեւելագէտ, քարտէզագիր եւ լեզուաբան Ադրիան Ռելանդին (1676–1718 թթ.)՝ համաձայնելով,

²⁸ Տէս Ա. ԴՈՒՄԻԿԵԱՆ, Հին Հայաստանի մասին հիերոգլիֆ եւ սեպագիր արձանագրութիւնների վկայութիւնները XIX դ. ֆրանսիացի արեւելագէտների լուսաբանմամբ. «Հայոց պատմութեան հարցեր». (Գիտական յօդուածների ժողովածու), Երեւան, 2009, էջ 4:

²⁹ «Բառարան Սուրբ Գրոց», Կոստանդնուպոլիս, 1881:

որ դրախտը չորս գետերի ակունքների շրջակայքում՝ Արմենիայում է պետք որոնել, ըստ այդմ մատնանշելով նաեւ երկու անյայտ գետերը: Ի մասնաւորի աշխարհագրական եւ լեզուաբանական գիտելիքներն ի գործ դնելով՝ Ռելանդը եզրակացրել է, որ Գեհովմն Արաքսն է, ստուգաբանելով, որ երկու անուններն արագագնաց են նշանակում. «The most probable account of its situation is that given by Hadrian Reland. He supposes it to have been in Armenia, near the sources of the great rivers Euphrates, Tigris, Phasis, and Araxes... The Gihon he thinks to be the Araxes, which runs into the Caspian Sea, both the words having the same signification, viz., a rapid motion»³⁰: Արեւելքի յաջորդ յիշատակութիւնը Ծննդոցի Ժ. գլխում է. «³⁰Եւ եղեւ բնակութիւն նոցա ի Մասեաց մինչեւ ի գալ ի Սովփերա լեռոնն արեւելեայց»: Մեր Սուրբ Հայրերը Մասեաց են թարգմանել Mesha բառը: «Եկեղեցի եւ ազգ: Եկեղեցի եւ պետութիւն»³¹ գրքում ակնարկուած է, որ դասական հայերէնին տիրապետողի համար Մասեաց բառը Մասիս տեղանուն բացառականն է, ուստի մեր Սուրբ Թարգմանիչները հատուածն ընկալել են՝ հմերը (մրանք) «բնակութիւն հաստատեցին (հեռացան-ցրուեցին) Մասիսից» ձեւով: Ընդ որում, գրքի յիշատակած՝ 1711 թ. Լօնդօնեան Համաշխարհային պատմութիւնը վկայում է, որ միայն հայ միջավայրում չէ, որ նման ընկալում է եղել: 1816-ին տպուած մէկ այլ ուսումնասիրութեան հեղինակ Յովսափատ Ասփինը Բենեդիկտեան նշանաւոր հայր էնթընի Աւգուսին Քալմէթի (1672—1757 թթ.) կարծիքն է բերում, թէ Մեշան Արմենիայի արեւելքի Մասիս կամ Մասիոս սարն է՝ Մովսէսի Արարատը: Իսկ Սեփարը (Սովփեր) Սափիրիսն է՝ նոյն երկրի արեւելքում. «Calmet supposes Mesha to be mount Masis, or Masius, in the west of Armenia, the Ararat of Moses; and mount Sephar, the mountains of the Saphirs, on the east of the same country»³²: Աւելի վաղ է շօտլանդացի մտածող, Չարլզ Ա. արքայի տաներէց Ալեքսանդր Ռոսսի (1590—1654 թթ.) աշխատութիւնը, ուր հարց ու պատասխանի ձեւով է ներկայացուած Ծննդոցը: Mesha-ի հնարաւոր բացատրութիւնը տալով՝ հեղինակը նաեւ նշում է, որ Մարտին Լիթերը նաեւ Մասիսի տարբերակն է հնարաւոր համարել³³: Բերուած օրինակները մեզ լիովին համոզում են, որ գրաբար թարգմանութեան մէջ

³⁰ <https://biblehub.com/commentaries/clarke/genesis/2.htm>

³¹ Երեւան, 2019, էջ 52:

³² S^{én} J. ASPIN, A Systematic Analysis of Universal History from the Creation to the Present Time", vol. I, Liverpool, 1816, էջ 313:

³³ S^{én} <https://quod.lib.umich.edu/e/eebo/A11058.0001.001/1:15.41?rgn=div2;view=fulltext>:

հանդիպող Մասեաց ձեւը ոչ թէ թարգմանական պատահականութեան արդիւնք է, կամ հնչիւնական լիակատար նմանութեան (նոյնպէս պատահական), այլ լիովին գիտակցուած եւ նպատակային կիրառութիւն:

Հիւսիս եւ արեւելք բառերի աստուածաշնչեան այլ օրինակներով չկամենալով ծանրաբեռնել շարադրանքը՝ պարզապէս նկատենք, որ կանոնից դուրս մնացած գրքերի պարագային եւս Հայաստանն ու Արեւելքը որոշ օրինակներում նոյնացուում են: Յոբելենից գրքում³⁴ (Ք. ա. 153–105 թթ.) նշուած են Տիրոջ սիրելի վայրերը. «Որովհետեւ Տէրը չորս [հաճոյ] վայր ունի երկրի վրայ. Եդեմական այգին, եւ Արեւելքի Լեռը, եւ Լեռն այս, որի վրայ [գտնւում] ես այսօր՝ Սինայը, եւ Սիոն Լեռը, որ յանուն երկրի օրհնութեան կօրհնուի նոր արարչութեան ժամանակ»: Չարլզի ծանօթագրութեամբ՝ «Որոշակի հաւանականութիւն կայ [Hermann] Rönsch-ի (Das Buch der Jubilden, 1874.— Գ. Մ., Ս. Մ.) առաջարկում (էջ 505–506), թէ Արեւելեան Լեռ ասելով՝ պէտք է հասկանանք Արարատի գագաթներից մէկը, ուր կանգ առաւ տապանը եւ Նոյը ողջակէզ մատուցեց... Կամ Արեւելքի Լեռն այն է, որ նկարագրւում է իբրեւ Տիրոջ Գահ երկրի վրայ... որի վրայ կբազմի Տէրը, երբ այցելի երկիր: Այն Եդեմական այգու հարեւանութեամբ գտնուող լեռներից ամենաբարձրն է...»:

Տիրոջ համար հաճոյ-սիրելի վայրի, կամ Տիրոջ՝ երկրային գահի մասին աւանդութիւնն ստիպում է դիտարկել վերելում յիշուած (Եսայ. ԺԴ. 13–14)՝ աստուածների ժողովման լեռան հետ նմանութիւնը: Արդեօք տարբեր են այս պատկերացումները: Դրանցից մէկը բաբելական է, միւսը՝ հրէական: Առաջինում բազում են աստուածները, միւսում՝ միակն է Տէրը: Եւ վերջապէս՝ մի դէպքում լեռը գտնւում էր հիւսիսում, մինչդեռ երկրորդն արեւելքում էր տեղաւորում այն: Իսկ հակառակ դիտանկիւնից՝ տարբեր ժողովուրդների պատկերացումներն են գերբնական ուժերի հաւաքատեղիի մասին, որն ստորգետնեայ կամ ջրային չէ, նաեւ երկնքում չէ, այլ շատ որոշ լեռ է: Եւ վերջապէս երկու պատումների պարագային էլ հետազօտողները, հնարաւոր տարբերակները քննելով, միեւնոյն՝ Մասիս-Արարատ լեռան հետ են կապում շարադրանքը, դրանով իսկ մեր աշխարհը նկատելով թէ՛ որպէս հիւսիսական, թէ՛ իբրեւ արեւելեան, որովհետեւ, ինչպէս տեսանք վերելում, Սուրբ Գրքում

³⁴ Մանրմասն տէս «Յոբելենից գիրքը՝ Հայքի մասին», «էջմիածին», 2012, Բ., էջ 58–70: Թարգմանութիւնը բերում ենք նշյալ աղբիւրից. հմմտ. բնագրի՝ 39–40 էջերը. «The Book of Jubilees or The Little Genesis», Translated from the Editor's Ethiopic Text and Edited, with Introduction, Notes and Indices by R. H. Charles, London, 1902:


հիւսիս եւ արեւելք բառերը կարող են միմեանց փոխարինել: Սա, հաւանաբար, հին եւ համեմատաբար նոր աւանդութիւնների տարբերութիւններով է առաջանում: Մեր պարագային նոյնպէս հնի եւ համեմատական նորի ազդեցութեամբ է, որ Մովսէս Խորենացու «հանուրց հիւսիսականաց վեհագոյն»ին արդէն Գրիգոր Տաթեւացին յիշում է «արեւելեանք կոչին հայք» արտայայտութեամբ³⁵:

РЕЗЮМЕ

В статье обсуждаются те отрывки из Библии, где упоминается Север. Авторы приводят несколько комментариев на английском языке, в которых фразы, включающие слово Север, отождествляется с Арменией. Кроме того, упоминается, что в Библии слова Север и Восток могут заменять друг друга. Следовательно, рассматриваются также похожие отрывки, где упомянут Восток. Особое внимание уделяется тем местам, где Север и Восток упомянуты как место «соборания» или «сонмы» Бога(ов), подразумевая Армению.

SUMMARY

The article discusses passages from the Bible, in which the word north is mentioned. The authors provide several English commentaries, in which phrases including the word north are identified with Armenia. Besides, it is mentioned that in the Bible the words north and east can replace each other. So, similar passages with the word east are also discussed. Particular attention is paid to those places, where the words north and east are mentioned in connection with God(s) and state the tradition of ancient times, according to which the “congregation” or the “assembly” of God(s) was in Armenia.



³⁵ «Գրիգոր Հարցմանց», Երուսաղէմ, 1993, էջ 555: